

**«Ա. Չեխովի անվան N 55 հիմնական դպրոց»
ՊՈԱԿ-ի կանոնադրության 2-րդ բաժնի 17-րդ կետի 3-
րդ ենթակետով պայմանավորված դպրոցը որոշել է
իրականացնել սովորողների լրացուցիչ կրթական
ծրագրեր:**

Պարի լրացուցիչ կրթական թեմատիկ ծրագիր

Պարի լրացուցիչ կրթական ծրագրի ընդհանուր տևողությունը 9 ամիս (36 շաբաթ) է: Առաջարկվող ծրագիրը նախատեսված է 6-10 տարեկան դպրոցականների համար:

Առաջարկվող շաբաթական ծանրաբեռնվածությունը ժամերով. 2 դաս՝ յուրաքանչյուրը 60 րոպե տևողությամբ:

Պարի լրացուցիչ կրթական ծրագիրը իրականացնելու է համապատասխան որակավորում ունեցող մասնագետը (կից ներկայացվում է փաստաթղթերը):

Պարի լրացուցիչ կրթական ծրագրի համար սահմանվել է ամսական 7000 ՀՀ դրամ վարձավճար:

Դպրոցում գործող Երկարօրյա ծրագրի ամբողջական փաթեթից օգտվելու դեպքում վճար չի գանձվում:

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը

Պարարի լրացուցիչ կրթական ծրագիրը երեխաներին ինքնարտահայտվելու հնարավորություն է տալիս, երեխան փորձում է իր ուժերը և կատարելագործում է իր հնարավորությունները: Պարարվի լրացուցիչ կրթական ծրագիրը հաճույք է պատճառում, բայց ամենից առաջ հարստացնում է երեխայի պատկերացումը աշխարհի մասին:

Պարարվեստի ուսուցումը սաներին ներկայացվում է պարային արվեստին բնորոշ բազմազան գույներով և հարուստ պատմությամբ: Սաներն ուսունասիրում են պարարվեստի զարգացման փուլերը, ոճերը,

Ժանրերը, կառուցվածքային ձևերը, յուրահատկությունները պատմական զարգացման տարբեր փուլերում, ծանոթանում հայ մշակույթի գեղարվեստական արժեքներին, ժողովրդական պարերին և ավանդույթներին, ազգային պարի ակունքներին:

Ծրագրի հիմնական նպատակները`

1. պարավեստի մշակութային արժեքների, ժողովրդական ավանդույթների ծանոթացում,
2. պարային բեմադրություններում պարային ճիշտ և գրագետ շարժումների օգտագործում և կիրառում
3. տաղանդավոր և շնորհալի սաների բացահայտում
4. մասնագիտական ճիշտ կողմնորոշման ձեռքբերում
5. առօրյայի նպատակահարմար և արդյունավետ կազմակերպում:

Խնդիրներն են`

1. ընդլայնել երեխաների աշխարհայացքը,
2. պարավեստի բնագավառում ստեղծագործական և կազմակերպչական ունակությունների զարգացում
3. ռազմահայրենասիրական դաստիարակության խթանում

Ուսումնական գործընթացն իրականացվում է տեսական և գործնական պարապմունքների զուգորդման միջոցով:

Դասավանդումը իրականացվում է չորս հիմնական գործառույթով:

1. Հայկական պար
2. Ժամանակակից պար
3. Տարբեր ազգերի(ժող . բնորոշ) պարեր
4. Լատինոամերիկյան (պարահանդեսային) պարեր

Ծրագրի ակնկալվող վերջնարդյունքներ՝

1. երեխաները կծանոթանան պարավետստի մշակութային արժեքներին և ժողովրդական ավանդույթներին,
2. կրեմականացնեն ծրագրով նախատեսված պարերը ,
օգտագործելով պարային ճիշտ և գրագետ շարժումներ,
3. կբացահայտվեն տաղանդավոր և շնորհալի սաներ
4. երեխաները կսովորեն նպատակահարմար և արդյունավետ կազմակերպել իրենց առօրյան:

| N. | Պարապմունքի թեմա | Ժամաքանակ | Նպատակ |
|----|---------------------------------|-----------|--|
| 1 | Պարերի ծագումը և նշանակությունը | 2 ժամ | |
| 2 | Ձեռքերի և դաստակների աշխատանք | 2 ժամ | սովորեցնել ձեռքերի և դաստակների ճիշտ աշխատանքի տեխնիկան |
| 3 | Ձեռքերի և ոտքերի դիրքեր | 2 ժամ | սովորեցնել պարարվեստի գլխավոր տարրերը |
| 4 | Քոչարու տեսակներ | 3 ժամ | ծանոթանալ հայկական ավանդական պարերի պատմության հետ, սովորեցնել Հայկական ավանդական պարերը |
| 5 | Յարխուշտա | 3 ժամ | ծանոթանալ հայկական ավանդական պարերի պատմության հետ, սովորեցնել Հայկական |

| | | | |
|---|--|-------|--|
| | | | ավանդական պարերը |
| 6 | Փափուրի, Տալտալա, Թամգարա, Լորկե Շավալի, Ասուլիս | 6 ժամ | ճանոթանալ հայկական ավանդական պարերի պատմության հետ, սովորեցնել Հայկական ավանդական պարերը |
| 7 | Շալախո-ոտնագարկ, մկրատ | 6 ժամ | ճանոթանալ հայկական ավանդական պարերի պատմության հետ, սովորեցնել Հայկական ավանդական պարերը |
| 8 | Վերվերու տեսակներ, քերծի | 6 ժամ | ճանոթանալ հայկական ավանդական պարերի պատմության հետ, սովորեցնել Հայկական ավանդական պարերը |
| 9 | Ծիսական և ռազմական | 6 ժամ | ճանոթանալ |

| | | | |
|----|-----------------------------------|-------|--|
| | պարեր | | հայկական ավանդական պարերի պատմության հետ, սովորեցնել Հայկական ավանդական պարերը |
| 10 | Մուսա լեռան պարերի շարան | 6 ժամ | ծանոթանալ հայկական ավանդական պարերի պատմության հետ, սովորեցնել Հայկական ավանդական պարերը |
| 11 | HIP-HOP | 4 ժամ | ապահովվել մարմնի սպորտային վիճակը |
| 12 | Գիմնաստիկա-մարմնի ձկունություն | 4 ժամ | գարգացնել մարմնի ձկունությունը |
| 13 | Վալս | 4 ժամ | ծանոթանալ լատինոամերիկյան պարավոճի տեսակների հետ |
| 14 | Չա-չա-չա | 4 ժամ | ծանոթանալ լատինոամերիկյան |

| | | | |
|----|----------------------|-------|---|
| | | | պարավոճի տեսակների հետ |
| 15 | Սամբա | 2 ժամ | ճանոթանալ լատինոամերիկյան պարավոճի տեսակների հետ |
| 16 | Ջայլ | 2 ժամ | ճանոթանալ լատինոամերիկյան պարավոճի տեսակների հետ |
| 17 | Կովկասյան պար | 2 ժամ | ճանոթանալ կովկասյան մշակույթի և պարերի հետ |
| 18 | Ռուսական պար | 2 ժամ | ճանոթանալ ռուսական մշակույթի և պարերի հետ |
| 19 | Իսպանական պար | 2 ժամ | ճանոթանալ իսպանական մշակույթի և պարերի հետ |
| 20 | Հնարքների տիրապետում | 4 ժամ | զարգացնել մարմնի ճկունությունը նոր հնարքների տիրապետում |

Դասացուցակ

| | |
|------------|-------------|
| Երկուշաբթի | 17:00-18:00 |
| Հինգշաբթի | 17:00-18:00 |